ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՆՈՔԱՎԱՆ
(բնական միջավայր եւ հնագիտություն)

ՀՀ Տավուշի մարզի այս գյուղի լեռնագրության եւ հնագիտության մասին առանձնակի խոսք ասել ստիպում են գիտական շրջանառության մեջ գտնվող սխալները եւ բացթողումները, որոնք մասնակի երեւույթ չեն առանձին վերցրած մեկ բնակավայրի համար, այլ վերաբերում են Հայաստանի աշխարհագրությանն ու պատմությանը: Իսկ սխալների շտկումը տեսականից բացի գործնական նշանակություն է ձեռք բերել մեր երկրի անկախության հռչակումից հետո, երբ ճշտվում են տեղանունները:

Խնդրին վերաբերող աշխատությունների մեծ մասը գրեթե նույն բանն է ասում.

«**Ենոքավան.** գյուղ ՀՀ Տավուշի մարզում, Իջեւան քաղաքից 6 կմ արեւմուտք, Կայեն լեռնաճյուղի գեղատեսիլ լանջին, Աղստեւ գետի ձախակողմյան վտակ Թալայի ձախ կողմում: Շրջակայքն անտառապատ է... Գյուղում եւ շրջակայքում կան զանազան հուշություններ՝ վիմափոր եկեղեցի, կիկլոպյան ամրոցի մնացորդներ, դամբարանադաշտ, գյուղատեղիներ, քարայրեր, Ս. Հովհաննես մատուռը, Անապատ վանքը, Ս. Սարգիս եկեղեցին»[1]:

Մանրուքներ են, սակայն անհրաժեշտ է նկատել, որ Ենոքավանն Իջեւանից հեռու է 9 կմ եւ գտնվում է քաղաքի հյուսիսային կողմում, իսկ Աղստեւի՝ Ենոքավանի մոտակայքով հոսող ձախակողմյան վտակը կոչվում է Սառնաջուր (կամ Պաղջուր), քանզի Թալան հնաբանություն է: Եւ վերջապես, որ շատ կարեւոր է, Ենոքավանը չի գտնվում Կայենի լեռնաշղթայի ճյուղերից մեկի վրա: Հայտնի է, որ Կայենի կամ Իջեւանի լեռնաշղթան, որ սկիզբ է առնում Հաղարծին գետի ակունքների շրջանում, զուգահեռականի ուղղությամբ 32 կմ ձգվում է մինչեւ Սառնաջուր գետի աջափնյակին հասնող Հաչա քար կատարը, ապա ուղղությունը կտրուկ փոխելով հարավ-արեւելք, Սառնաջուր գետին զուգահեռ հասնում Իջեւան քաղաքի հյուսիսային մուտքին բարձրացող Դովրաքար, ժողովրդական խոսվածքում՝ Թեւրաքար, ժայռին: Իսկ Ենոքավանը գտնվում է Սառնաջուր գետի խորաձորի ձախ ափին եւ ուրեմն տեղավորված չէ Կայենի (կամ Իջեւանի) լեռնաշղթայում:

Հայտնի է, որ պայմանավորված իրենց բնույթով, լեռնաշղթաները կարող են ունենալ ինքնուրույն անուններով լեռնաբազուկներ (լեռնաթեւեր), որոնք իրենց հերթին կարող են կոչվել լեռնաշղթաներ: Ճիշտ նման վիճակի ականատես ենք դառնում Գուգարաց լեռնաշղթայի միջնամասից սկիզբ առնող Մթնասարի լեռնաշղթան դիտարկելիս, որն ուղղությունը բազմիցս փոխելով, իրենից նոր ճյուղեր տալով՝ ՀՀ Տավուշի մարզի արեւմուտքից

1 «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Եր., 1988, էջ 204:



ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՍՐՎԱՆԵՍ)
ՄԱՏՈՒՌԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ձգվում է (38կմ) մինչեւ Աղրբեջանի Ղազախի շրջան եւ մարում Կուրի աջափնյա դաշտավայրում: Ահա, լեռնաշղթան սկզբնամասից մոտավորապես 6 կմ հեռավորությամբ բարձրացող Մեծ սարից (1916 մ) դառնում է եռաթեւ: Զախ թեւը Սամսոնի ձորի եզրով իջնում է Քարահան (Կիրանց) եւ Սամսոն գեղերի միախառնման անկյունը: Կենտրոնական բազուկը՝ Մթնաձորի լեռնաշղթա անունով, Սամսոն գեղի ակնահաճո հովտի աջ եզրով աղեղվում է արեւելք, ապա՝ հյուսիս-արեւելք, եւ ձգվում դեպի Կուրի աջափնյակ: Իսկ Մթնասարի լեռնաշղթայի աջ բազուկը Մեծ սարից հարավ նախ իջվածք է տալիս, ապա Ֆիդայասարի (նախկին Սուլթանի ուրթ) թամբոցով միանում դեմ-հանդիման հառնող Կարմրաքար (նախկինում՝ Ղզըլկայա) լեռնակատարին (2091 մ), որը փաստորեն նոր լեռնագագաթ սկիզբ է եւ պետք է ընկալել որպես լեռնաշղթա՝ Կարմրաքար անունով:

Մթնասարի լեռնաշղթայի այս բազուկը Մեծ սարից առանձնացած Կարմրաքար լեռան գագաթից ճիշտ հարավարեւելյան ուղղությամբ՝ թեթեւ անկումով, Սառնաջուր գեղի ձախափնյակին զուգահեռ՝ ընդգրկելով Կոճաքար, Ծաղկոտ ուրթ, Շարուքար, Պստի սար գագաթները, ձգվում է դեպի Ենոքավան գյուղը, որից հյուսիս-արեւմուտք կտրուկ իջվածք տալուց հետո հերթագայվող բնական դարավանդներով մարում Աղստեւ գետի ձախափնյակին: Շուրջ տասնհինգ կիլոմետր ձգվող Կարմրաքարի լեռնաշղթան ջրբաժան է Աղստեւի ձախակողմյան վտակներ Սառնաջուր եւ Մթնաձոր գետերի համար: Կազմված է կարմրագույն նստվածքային ապարներից, որոնցից ստացել է իր անունը:

Լեռնազանգվածը կազմող նստվածքային ապարների հզոր շերտերը երեւում են Սառնաջուր գետի ձախափնյակին իշխող ժայռերի մերկացումներում, որոնց հողմնահարված խորշերում բազմաթիվ են քարայրները, որ վաղնջական դարերում օգտագործվել են որպես ամրոցներ, ապաստարաններ եւ հոգեւոր շինություններ: Ենոքավան գյուղը նույնպես տեղավորված է Կարմրաքարի լեռնաշղթայի հարավ-արեւելքում, դեպի Աղստեւ գետն իջնող գեղատեսիլ դարավանդներից մեկի հարավային եզրին, ծովի մակերեւույթից 956մ բարձր: Կարմրաքարի լեռնաշղթայի լանջերին, Ենոքավանից բացի, տեղադրված են մի շարք գյուղերի ամառանոցներ, բազմաթիվ քարանձավներ, հնավայրեր, կարմիր մարմարի հանքը, մեկ տասնյակի չափ արտադրական ձեռնարկություններ: Լեռնաշղթայի կենտրոնով ձգվում է Աղստեւի հովիտը Տաշիր-Զորագետի թագավորության ոստան Լոռե բերդի հետ կապող միջնադարյան , այժմ՝տեղական նշանակության ճանապարհը: Այս լեռնաշղթայի հարավարեւելյան ստորոտով (Աղստեւի ձախ ափով) են անցնում Երեւան-Իջեւան-Նոյեմբերյան-



ՓՈՔՐ ԱՆԱՊԱՏ ՎԱՆՔ (ԿՏՐՎԱԾՔԸ)

Թբիլիսի միջպետական խճուղային ճանապարհը, Երեւան-Հրազդան-Իջեւան-Ղազախ երկաթուղին, Արտաշատ-Երեւան-Հրազդան-Դիլիջան-Իջեւան-Ջողազ-Թիֆլիս միջնադարյան քարավանային ճանապարհը:

Ենոքավանի պատմական միջավայրն արժեւորելու տեսանկյունից, անշուշտ, մեծ է վաստակաշատ հնագետ Սրեփան Եսայանի ավանդը, որը 1966-1967 թթ. պեղել եւ ուսումնասիրել է Ասդղի բլուր հնավայրն ու Բերդատեղի կիկլոպյան ամրոցը[2]: Դրանով հանդերձ, հնագիտական առումով, գյուղի տարածքը վատ է ուսումնասիրված եւ, որպես ասվածի ապացույց՝ կներկայացնենք դրանցից երեքը:

Է դարում կերտված Սուրբ Հովհաննես մատուռը, որը տեղական խոսվածքով կոչվում է Սրվանես, գտնվում է գյուղից 2.5 կմ հյուսիս՝ Իջեւան-Ենոքավան-Ֆիդայասար-Կարմիր

2 **Ս. Եսայան**, Տավուշ-նյութական եւ հոգեւոր ժառանգություն, «Ասդղի բլրի պեղումները», Եր., 2009, էջ 82-83:

գեղ ճանապարհի աջ եզրին: Երկար ժամանակ եղել է փղատակների տակ, ուստի նրա նկարագրությունը չկա որեւէ աղբյուրում: Հինգ տարի առաջ այն հողի տակից լույս աշխարհ են հանել մոտակայքում զորավարժությունների մասնակցող հայոց բանակի զինվորները: Մեղմաթեք սարավանդի եզրին թառած սրբատունն ունի խաչաձեւ հատակագիծ, որը լավ երեւում է արտաքին պատերի բացվածքով եւ նման է հավասարաթեւ խաչի: Ներքուստ քառախորան սրահը ներկայանում է որպես իրար կցված չորս կիսաշրջանների պատկեր: Արեւելյան կիսաշրջանը զբաղեցնում է սուրբ սեղանը: Միակ մուտքը հարավային կիսաշրջանի կենտրոնից է: Մատուռի պատերը շարված են ճեղքված, ուղղանկյուն տեսք տված տեղական կրաքարերով՝ կապակցված կիրավազի շաղախով: Արտաքուստ մատուռն իր վրա պահող քառակուսի գետնախարիսխի եզրերը եւ խաչաթեւերի անկյունները եղել են սալահատակված: Մաքրման ընթացքում շինարարական աղբի տակից լույս աշխարհ են եկել մեկ տասնյակ անվնաս կամ ջարդված անվիմագիր խաչքարեր, որոնք կատարման արվեստով յուրահատուկ են ԺԲ-ԺԳ դարերի գործերին: Շինության արեւելյան կողմում նշմարվում են անվիմագիր տապանաքարեր:

Գյուղից 3.5 կմ արեւմուտք՝ Սառնաջուր գետի խորաձորի ձախակողմյան հարթակներից մեկին, տարածվում է Կռանա տախտ հնավայրը: Բարձրակետում Կռանա ժամ միանավ մատուռն է, որը 570x410սմ արտաքին չափերով համեստ շինություն է՝ կերտված տեղական անմշակ բազալտից եւ չեչաքարից: Մատուռից 90-100 մետր ներքեւ՝ գետափին շատ մոտ, տարածվում է բուն Կռանա տախտը: Այստեղ հսկա քարաբեկորներով շրջապատված կա իրար կից երկու հրապարակ, որոնք աչքի են ընկնում կանգուն, տապալված, ջարդված կամ անվնաս խաչքարերի շատությամբ: Դրանք որոշակի (արեւելք-արեւմուտք) ուղղությամբ չեն շարված եւ տպավորություն է ստեղծվում, որ այս՝ իրար կից հարթակները խաչքարերի պատրաստման արհեստանոցներ են: Այդ միտքն իշխում է ենթադրությունների զրույցներում: Բազմաթիվ քարտաշներ իրենց վարպետի գլխավորությամբ այստեղ ամիսներ շարունակ տաշել, հղկել եւ նախշազարդել են մերձակա քարհանքերից բերված սալերը, դարձրել արվեստի գործ: Մեր հաշվարկով անվնաս, ջարդված, առանձին կտորներով, պատվանդանավոր կամ անպատվանդան առկա խաչքարերի քանակն անցնում է չորս տասնյակից, եւ դա այն դեպքում, երբ քառորդ դար առաջ ինչ-որ վայ հնասերներ տեղափոխել են բազմաթիվ բարձրարժեք խաչքարեր:

Իսկ ինչ է նշանակում Կռանա տախտ տեղանունը: Տեղական խոսվածքում տախտ նշանակում է հարթություն, տափարակ: Անվան առաջին՝ կռան+ա բաղադրիչը բացատրելի է կռանել=կոփել, տաշել, հղկել իմաստներով: Եւ իսկապես, այստեղ արհեստանոցներում անանուն վարպետները օրնիբուն կռանել են սքանչելի խաչքարեր: Հավանաբար սկզբում **կռանելու տախտ** վայրը դարձել է տեղանուն եւ տեղական խոսվածքին համեմատ սկսել է հնչել Կռանի կամ Կռանա տախտ:

Կռանա տախտից մեկ կիլոմետր արեւմուտք՝ կարմրաքարի լեռնաշղթայի քարեղեն բարձունքից սահուն թեքությամբ դեպի Սառնաջուր գետի ձախ ափ է ճառագայթում լիովին անտառապատ մի լեռնապատ, որի ծայրին է գտնվում քարայրային երկու վանքերից կազմված Անապատ հնավայրը: Առաջինը, որը կոչվում է փոքր Անապատ, գտնվում է վերն աս-



ՄԵԾ ԱՆԱՊԱՏ (ԿԱՄ ԼԱՍՏԻՎԵՐ) ՔԱՐԱՅՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ված լեռնամատի ներքնամասում՝ ուղղահայաց ժայռի միջնամասի քարայրներում: Դրանց կարելի է ձախ կողմում հառնող մեկ ուրիշ ժայռի գրեթե ուղղաձիգ լանջով անցնող արահետով, որի մեկ մասը փայտե կամրջակ է: Միջնադարում կերտված այս հոգևոր շինության համար, անշուշտ, լավ հիմք են հանդիսացել երկու մակարդակի վրա (գծապատկերում Ա եւ Բ) գտնվող չորս եւ երեք բնական այրերը, որոնք խորացվել եւ իրար են միացվել մարդկանց աշխատանքով: Ա մակարդակի քարայրից Բ մակարդակի քարայր բարձրանալու համար եղել են քարե ասպիճաններ: Ժամանակի ընթացքում, հավանաբար ճգնակյացների թվաճի թելադրանքով, առաջացել է վանքն ընդարձակելու անհրաժեշտություն: Ուստի Ա մակարդակի ամենամեծ այրի արեւմտյան առասպաղից, չեչաքարի միջոցով թեքությամբ, ապա ուղղահայաց դեպի վեր, կլոր անցք է բացվել, եւ անանուն ճարտարապետը ժայռի մեջ կերտել է թիվ 1, իսկ հետագայում նրա վրա՝ թիվ 2 աղոթասրահը: Այսպիսով ստացվել է յոթ քարայրներից եւ ժայռի մեջ իրար վրա կերտված երկու մատուռներից բաղկացած վիմափոր, եռահարկ հոգևոր շինության համալիր, որն ինքնատիպ է մեզանում:

Այստեղից լեռնամատի վրայով մինչեւ նրա հիմքը հասնելուց հետո անտառային արահետը հասնում է մի նոր ուղղահայաց ժայռի ստորոտը, որտեղից 25-30 մետր բարձրության վրա երեւում է մի նոր մեծ քարայր, նրա առջեւում՝ պատ: Սա էլ Մեծ Անապատ վանքն է, որը երբեմն կոչվում է Լաստիվեր[3]: Ստորոտից ոչ մեծ դժվարությամբ կարելի է հասնել քարանձավի աջ եզրից 8-10 մետր ներքեւ գտնվող հարթակին, որտեղից քարայր են մտել լաստան-

3 Ըստ ժողովրդական ստուգաբանության, վանքն այսպես է կոչվել այն պատճառով, որ դժվարամատչելի քարայր մտնելը դյուրացնելու համար օգտագործել են ծառի ճյուղերից հյուսված լաստ(ակ)ներ, դրանցով գնացել են լաստն ի վեր:

ման փռվող սանդուղքով: (Այժմ ենոքավանցի ճարպիկ պապանիները վեր են բարձրանում ժայռագնացների պես՝ մերկ ձեռքերով եւ ոտքերով մագլցելով):

Քարայրն ունի 6 մետր երկարություն, 3-4 մետր բարձրություն, 4-5 մետր խորություն: Բացվածքի եզրին դրված է քարե պատ, որն ամրացված է կիրավազի շաղախով: Ներսում՝ անձավի ձախ վերնամասում, կա 1.5x2 մետր չափերով «առանձնասենյակ», որը գուցե հատկացվելիս է եղել այստեղ հավաքված ճգնավորների հոգեւոր ավագին: Քարայրի կենտրոնից մի փոքր ձախ ժայռի բնական ելուստից քարագործ վարպետը կերտել է մեկ մետր բարձրությամբ բաժակաձեւ ջրավազան: «Բաժակի» պատի հաստությունը 15 սմ է, արտաքին տրամագիծը՝155 սմ, ներքին տրամագիծը՝125 սմ, եւ նրա մեջ քարանձավի առաստաղից անդադար ջուր է կաթում, որը միշտ սառն է, իսկ մակարդակը՝միշտ հաստատուն: